

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և Պայմանագրեր 8 ՄԵՃ.
Չ Գաւառաց 10 ՄԵՃ.
Չ Գաւառաց 4 ՄԵՃ.
Չ Գաւառաց 3 ՄԵՃ.
Բարձրագոյն թիւերը գին 60 փոյ.
Յանուարի ամիսը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար զատ անկարգութիւն կրկնայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔ

Գուրա գաջած լրագրաց ճանրու-
ած թիւը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ եւ ինչէ գրութիւն խմբագրի-
—Տնօրէնին պիտի ուղղուի, և Պո-
լիս, Չիկիլի խան, Մարտի գրասեն-
եակը:
Ճամբու ծախքը չվճարուած եւ-
թակ չընդունուիր:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 27 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Անգղիոյ արտաքին գործոց նախա-
րար Լորտ Տէրպիլի ըրած վերջին յայ-
տարարութիւններէն աշխարհ զար-
մանօք իմացաւ թէ Եւրոպիոյ խաղա-
ղութիւնը ծանր վտանգ մ'անցուց
այս տարի:

Գերմանիոյ աշխարհաշարութեան
գլուխները, Պ. Պիսմարք և Պ. Մարթ-
քէ, Գաղղիոյ անակնկալ արագու-
թեամբ վերականգնուան ու բարդա-
ւածանքը տեսնելով, բնականաբար
չեն կրնար հանգարտ սրտիւ նախա-
տեսել զապագայն: Գաղղիական աղ-
գին բնաւորութեան և նշանակալի
անցելոյն ծանօթ եղողները դժուարա-
կը հաւատան թէ այդ մեծ և դիւ-
րագգած աղգն 1870ին ու 71ին յան-
պատրաստից կրած ծանր հարուածն
ու նուաճութիւնը կարենայ երբեք
մարտել, և վաղ կամ անագան իւր
կորանքը կանգնելու չձեռնարկէ:
Իւր զինուորական զօրութիւնը վե-
րակազմելու և Գերմանիոյ զօրութե-
ան հետ իսկ ստուարագոյն վիճակի հաս-
ցնելու համար ի գործ դրած լին
փութաշանութիւնը Գերմանիոյ ու-
շաղթութեան վրիպած չեն:

Սպասել որ Գաղղիա իւր զինուո-
րական վերակազմութիւնն աւարտէ
և Գերմանիոյ ասպարէզ կարգաւոր-
վիճակին հասնի, Գերմանիոյ աշխար-
հափարաց հաշուոյն չյարմարիր ան-
շուշտ, ուստի կը խորհի պատճա-
ռաւք մը դանկելով նոր հարուած
մը տալ Գաղղիոյ, որպէս զի դեռ կաղ-
մուելու վրայ եղող զօրութիւնը չըն-
ջուելով, և աւելի ծանր պարտուց
ներքէ իյնալով, երկար տարիներ և
գուցէ իսկ յաւիտեան չկրնայ աչք
բանալ և վրիժառութիւն մտաբե-
րել:

Այս խորհրդով Գերմանական կա-
ռավարութիւնը նոյն աշխարհափա-
րութիւնը բռնել ուղեց ինչ որ հին
Հռոմայեցիք բռնեցին կարճեղմաց-
ւոց նկատմամբ Պունիկեան երկրորդ-
պատերազմէն ետեւ: Գաղղիացւոց
զինուորական վերակազմութեան գոր-
ծին իբրեւ Գերմանիոյ դէմ պատե-
րազմի պատրաստութիւն նկատելով
դադրեցներ տարու, և եթէ ոչ՝ պա-
տերազմ հրատարակելու սպառնա-
լիք ըրաւ: Բայց Անգղիա և Ռուսիա
միջնորդելով Գերմանիոյ կառավա-
րութիւնն ետ կեցուցին իւր պահան-
ջումէն, և պատերազմի վտանգին
առաջն առին, հասկնելով թէ այս
անգամ նախադարձակ եղողն իրեն
դէմ պիտի գտնէ զԵւրոպա:

Այս միջնորդական գործին շար-
ժաւիթն, եթէ մասամբ մ'եւրոպիոյ
խաղաղութեան ընդհանուր շահն է,

մեծ մասամբ ալ Եւրոպական հաւա-
սարակչութեան աւելուելուն երկիւ-
ղն է: Գաղղիոյ չափազանց տկարա-
ցումն և Գերմանիոյ չափազանց զօ-
րացումն ոչ Ռուսիոյ շահուն կուգայ,
ոչ ալ Անգղիոյ: Գերմանիա՝ արդէն
Եւրոպական տէրութեանց առաջինն
է իւր զօրութեամբ և դիրքով: Գաղ-
ղիա երկրորդ է այսօր, բայց քանի
մը տարիէն կրնայ հակակշուր դիւր-
մանիա Արդ՝ երբոր այս վերջինը բու-
լղովին տկարանայ ու նուազի, Գեր-
մանիա՝ նորէն ձեռք բերելիք կողմ-
պուտներով առաւել ևս մեծցած ու
զօրացած, բովանդակ Եւրոպիոյ մի-
ահեծան տէր ըլլալու հօր արգելք
մը չունենար իր առջև:

Այս ամենածանր վտանգն ամենէն
անտարբեր և պաղարիւն ողբին՝
Անգղիացւոց իսկ՝ գրգռու մ'եղաւ,
որ անմիջամտութեան աշխարհափա-
րութիւնը մէկդի թողլով, Եւրոպա-
կան խնդրոց մէջ երկար ժամանակէ
ի վեր լռեցուցած ձայնը դարձեալ
լսելի ընել սկսի:

Գաղղիոյ մէջ հանրապետական
կուսակցութիւնը նոր և մեծ յաղ-
թանակ մ'ալ տարաւ աղբային ժո-
ղովոյ մէջ:

Սահմանադրական օրէնքները
քննելու պաշտօն ունեցող յանձնա-
ժողովն որ 30 անգամէ կը բաղկա-
նար, ամենամեծ մասը միապետա-
կան, աղգային ժողովոյ մէկ անըն-
պաստ քուէէն հարկադրեալ հրա-
ժարական տալով, նոր յանձնաժո-
ղովոյ մ'ընտրութեան ձեռնարկուե-
ցաւ և 30 անգամուց 26 ը հանրապե-
տական եղան:

Ասիկէ երկու տարի առաջ, միև
նոյն օրը, այն է՝ մայիս 17/29ին, աղ-
գային ժողովը տապալեց Պ. թիւր,
հանրապետական միտումներ ունենա-
լուն պատճառաւ, և երկու տարի
շարունակ հանրապետութեան դէմ
մտքառելէ ետեւ, վերջապէս իւր մի-
ապետական մեծամասնութիւնը քայ-
քայուելով հանրապետական կառա-
վարութեան ձեռն ընդունելու հար-
կադրեցաւ:

Հանրապետական կուսակցութիւ-
նը՝ երեսնից յանձնաժողովին ընտ-
րութեան մէջ ձեռք բերած յաջո-
ղութեան վրայ ուրախ, վեհանձնու-
թեան փորձ մը տալ ուղեց, և չորս
ալ աշակերտական ընտրեց, որպէս զի
յանձնաժողովին մէջ միապետականը
ալ իրենց կարծիքը կարենան յայտ-
նել:

Աւելորդ է ըսել թէ հանրապե-
տութեան այս նոր յաղթանակը մեծ
ղայլով պատճառած է միապետա-
կանաց, որոց երկու տարիէ ի վեր
թափած ճգուէքը չկրնայ յաջող ար-
դիւնք մը տալ իրենց բաղձնաց:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Պրիւսի 4 յունիս.
Թափորի առթիւ նոր անկարգութիւնք
տեղի ունեցան այսօր քաղաքի մէջ:

Վիէննա 4 յունիս.
Կայսրն ամուսն 8 ին Վիէննա պիտի
վերադառնայ՝ տէրութեան երամսից հաշ-
ւեցոյցն որդեւու համար գումարուելը
նախարարաց խորհրդին նախագահելու:

Փարիզ 5 մայիս.

Պ. Տը Բէմուս ամուսն 3ին մեռաւ:

Պրիւսի 5 յունիս.

Վաղուան թափորին առթիւ ալ նոր
անկարգութիւնք կը կատարուին: Աղ-
գային պահապան զօրքերը խմբուելու
հրաւիրեցան, և դատական գործոց նա-
խարարը տէրութեան օրինապահներուն
հրաման ըրաւ որ անկարգութիւն գըր-
դուողներուն վրայ աշտուրջ հսկողութիւն
ընեն և եթէ պէտք ըլլայ խնտութիւն ի
գործ դնեն:

Փարիզ 5 յունիս.

Մահմադրական լրացուցիչ յօդ-
ւածոց վիճարկութիւնն ամուսն 15 ին
պիտի սկսի:

Վիէննա 6 յունիս.

Երբեք արշիւտքը վաղը քաղաքէս
պիտի մեկնի Գաղղիոյ հանքային շուրերն
երթալու համար: Եւ իսկն անցած միջո-
ցին Գերմանիոյ և Ռուսիոյ կայսրերը պի-
տի բարեկէ:

Վիէննա 6 յունիս.

Նիկիի երեսփոխան Պ. Պուրիսանի ընտ-
րութիւնը քննելու պաշտօն ունեցող յանձ-
նաժողովն յիշեալ ընտրութիւնն ոչնչա-
ցնելու որոշում տուաւ:

Աղգային ժողովը բանտարկելոց նը-
կատմամբ տաշարկեալ օրինաց հաւանու-
թիւն տուաւ:

Նիւսնից յանձնաժողովը Նիւսնից տա-
կան ընտրութեանց վրայ չիմուած յօդ-
ուածոց մեծ մասն ընդունեց:

Պրիւսի 6 յունիս.

Թագաւորին եղբայր Ֆրանտի կամը
չըջաղայած ժամանակ Օլիվիէ զնդապե-
տին վրայ յարձակող մարդ մը վրաւարեց
ատրճանակի հարուածով:

Լոնդոն 5 յունիս.

Կոնստ. Բոնա.	43 3/4
Խիս 1865	69
» 1869	54 3/4
» 1871	67 7/8
» 1872	86 1/8
» 1873	52 7/8

Նոր փոխառութիւն —

Անգլ Բոնա. 92 11/16

Իսթրիա 5 յունիս.

Խմբակ Միտիլի—Շրիտան 8
» Ֆաշը Տօլեբաճ 5 1/8
Գախտած 12000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուլթանին դահակալութեան
տարեկարձին առթիւ (յունիս 13/25
ին օրը) Բարձր. Լեւոն—Եպարքոսին
տալիք մեծ կոչուեցն՝ անցեալ տա-
րիներուն պէս Պէյքօզի կայսերական
Քէօշկին մէջ տեղի պիտի ունենայ:

և ասոր համար մեծ պատրաստու-
թիւնք կըլլան:

Մէքլէմպուրկի ժառանգ. մեծ
գուքան ուրբաթ իրիկուն գաղղիա-
կան շոգենաւով Կ. Պոլիս եկաւ: Ա-
թէնքէն:

Նոյն շոգենաւով մայրաքաղաք
հասաւ նաեւ Հիլլենական նոր դես-
պան Պ. Գունտուրիօթի:

Շարաթ օրը Բարձր. Մեծ—Ե-
պարքոսն և արտաքին գործոց վը-
սեմ. նախարարը Բերաերթաւով այ-
ցելութիւն տուին Մէքլէմպուրկի ժա-
ռանգ. մեծ գրքին:

Կայսերական կառավարութիւնը
մայրաքաղաքի մէջ իրաւագիտու-
թեան վարժարան մը բանալու որո-
շումընելով՝ ձեռնհաս անձերէ յանձ-
նաժողով մը կազմեց, որպէս զի յիշ-
եալ վարժարանը կազմաւորեն:

Թուրքո—Պարսկական ռազմանա-
գըլիւց ճշդիւ որոյման համար կաղ-
մուած խառն յանձնաժողովը շա-
բաթ օրն երկրորդ նիստն ըրաւ:

Մայրաքաղաքի Պարսից դես-
պան Միրզա Մոհսին խան ալ ներ-
կայ էր այս նստին:

Վաքիթ անուն թուրքերէն թեր-
թը կը ծանուցանէ թէ երամսից նա-
խարարութիւնը տէրութեան պաշ-
տօնատարաց անվճար մնացած ամ-
սականները պիտի վճարէ:

Լեվընթ Հէրըլախ խօսքին նայե-
լով դրոշմի նոր տուրքը միայն մայ-
րաքաղաքի մէջ՝ օրն 200 լիրա հա-
սոյթ կուտայ տէրութեան դանձուի:

Կերակի օրը Հիւնքեար իսկէլէսին
երկու յոյն իրարու հետ կռուելով,
մին զմիւսը դանակով զարկաւ սպան-
նեց:

Ոճրագործը բռնուեցաւ:

Ուրբաթ իրիկուն՝ Բերա. Թէք-
քի դրան մօտ երկու իտալացի գո-
ղեր անցորդի մը ժամացոյցը խլելով,
փախած ժամանակ բռնուեցան ոստի-
կանութեան:

Նիկովիդիոյ կառավարչն իմաց
տուաւ ոստիկանութեան նախարարին
թէ թափաքլի կողմերն երկցող ա-
ւաղակներէն ութը բռնուեց ին:

Ասիկէ հինգ ամիս առաջ Նիկովի-
դիոյ նախկին կառավարիչ Արիֆ փա-
շայի տունէն 5—600 լիրայի գողութիւն
մ'եղած էր:

Ոստիկանութիւնն իմանալով՝ կաս-
կածի ենթարկեալ երկու մարդ բռն-
ուած բանտարկած էր, բայց անոնք
բացարձակապէս ուրանալով, գողու-

Թիւնը չէր կրցած վրանին հաստատուել: Սակայն անցեալ շաբթու գործը պարզուեցաւ: Ոստիկանութիւնը բանտարկեց միայն աներոջը վրայ կասկածի երթալով, որ քիւլիւք բազարի թաղը սրճադարձ էր, առնել կոխեց և խուզարկութիւն ընելով գողցուած ապրանքներուն մէկ մասը գտաւ, զորս բանտարկեալներէն մին աւանդ. յանձնեւ էր իւր աներոջը:

Յունական թրաքի անուն լրագիրն Երուսաղէմէն հեռագրով լուր տաւ կը ծանուցանէ թէ Հայերը Համբարձման օրը Զիթենեաց լեռը թափօր պտըտելով, յայնք արգելաւ ուղեր են, և ասկէց կ'ալ ծագելով երկու կողմանէ մարդիկ վիրաւորուել են:

Երէկ առաւօտ Հայտար փաշա հրդեհ պատահելով՝ երեք տուն այրեցաւ:

Յունական վիզանթիո լրագրին մէջ կը կարդանք թէ շաբաթ օրը Վեհ. Սուլթանին երրորդ որդի Բարձր. Մէհմէտ Շէվքէթ էֆէնդին կառքով Բերայի մեծ փողոցէն անցած ժամանակ, անձանթ մարդ մը կառքին ապակիները կտրելու փորձ փորձեւ է սպառնալից դէմքով: Բայց անմիջապէս բռնուելով Բերայի ոստիկանութեան գուռը՝ տարուել, և հոն խեղաքար Հելլենացի մ'ըլլաին ստուգուելով հիւանդանոց զրկուել է:

Կէլիպոլէն լուր կուտան թէ տեղւոյն կառավարիչ ձեմիլ վաշան Ղանօ և Հօրայի մետարապօլիտն սպաննողները բռնեւ է: Ասոնք չորս հօգի են եղեր, Միսաֆիր Մէհմէտ էֆէնդին, Զէքէրիա, Հիւսէյին պէյ և Զապիթ:

Միանգամայն Շարքէօյի Գայմադամը՝ մարդասպաններուն ետեւէն իյնալու և բռնելու անհոգութիւնը բաժնի ըլլալուն պատճառաւ պաշտօնէն ձգուել է:

ԱՌՍԱՆԴՆԱԳՈՒԹԻՍ		
ԵՍՆԱՅԸ ՈՒՄՈՒՄԻՆԷ		
26 մայիս երկուշաբթի իրիկուն	49	40
27 մայիս երեքշաբթի առաւօտ		
բացուեցաւ	49	43
կէս օր	49	44
Կ. Պոլիս 26 մայիս		
Ոսթիթէ թէնէրալի բաժինը Սնդգ-իլի	7	38
« Փոխանակութեան »	5	37
Կ. Պոլսոյ Պանքային »	6	40
Քրէտի թէնէրալ »	10	20
Քրէտի Սթրոմ-Թի. Բ. ք.		
Երկաթուղեաց	Ֆր.	427
Փոխ. 1863	»	342
» 1865	»	342
» 1869	»	282
» 1872	»	88 1/2
» 1873	»	272
Թրամուէյ	Օսմ. իր	3 30

ԸՆԴԱՅՔ ԿՐԱՄՈՒՄ		
26 ՄԱՅԻՍ		
Անդ. լիւր	գոր.	410.35
Նաթիլիս ուկի »	»	88 6
Իմպէրիալ Ռուս »	»	89 34
Վերըմից »	»	54 30
Հինգ ֆրանք »	»	—
Հինգրոց »	»	404 25
Պլինձ »	»	430 40

ԱԶԳԱՅԻՆ

Կերակի օրը Սահմանադրութեան թերթ տարեգարձը կատարեցաւ Հիւնքեար իսկէյէսին, Արթ. Իզմիրլեան Մատթէոս վարդապետի նա.

խաղաճութեամբ, որ Պէյքօղի թաղ. խորհրդոյն խնդրանք և Սրբազան Պատրիարք հօր հրամանաւ կերակի առաւօտ Պէյքօղի եկեղեցին Ս. Պատարագ մատուցանելէ, և ուրիշ տարիներու սովորութեան համեմատ եկեղեցւոյն դուրսի կանաչազարդ հրապարակին մէջ քարոզ խօսելէ ետեւ, նախագծուեց առաջնորդութեամբ հանդիսիւ Հիւնքեար իսկէյէսի գնաց և Պէյքօղի թաղ. խորհրդոյ ազգասիրական ջանքը պատարաստած ճաշին նախագահեց:

Սեղանին վրայ առնախօսութիւններ եղան և բաժանիկներ առաջարկեցան Վեհ. Սուլթանին կենացը, ազգին բարօրութեանը, Սահմանադրութեան յարատեւ հաստատութեան նպնէսէն և Ս. Պատրիարքին կենացը: Թէև յատկապէս վարձեալ շոգեհաններ շատ չկային այս տարի, բայց դարձեալ ազգայնոց բաւական բազմութիւն գնացած էր, որք մինչև իրիկուն խաղաղութեամբ և կանոնաւորութեամբ ժամանակ անցուցին Հիւնքեար իսկէյէսի գեղազուարճ զբօսավայրին մէջ:

Խորմեան սրբազանի աշակերտ Արթ. Գարեգին վարդապետ Սըրուանձտեանց երէկ առաւօտ մայրաքաղաքն եկաւ իզմիրէն:

Արդէն ծանուցած ենք մեր շաբաթ առաւ թուով թէ Ամեն. Ս. Պատրիարք հայրն ուրախ օրն իզմիրէն եկած հեռագրի մը խնդրանք համաձայն հեռագրով հրաման զրկած էր որ Արթ. Գարեգին վարդապետ՝ տեղւոյն սահմանադրական ընտրութեանց նախագահէ: Սակայն Արթ. Գարեգին վարդապետ՝ որ քիչ օրէն Կ. Պոլսի վերադառնալու նպատակաւ իզմիր գնացած էր, վերոյիշեալ հրամանին վրայ պարտաւորուել է շուտով Կ. Պոլսի գալ և իւր գործերը կարգադրելով իզմիր վերադառնալու և այնպէս իրեն յանձնուած պաշտօնն ըստ օրինի կատարել:

Իզմիրի քաղ. ժողովն ալ յատկապէս գիր գրած է առ Ս. Պատրիարքն, որպէս զի յիշեալ Արթ. վարդապետը շուտով իզմիր վերադարձնել բարեհաճի:

Ահաւասիկ ուրբաթ առաւ ազգային ժողովոյ մէջ առաջին առնետակեալ Սրբազան Վսեմ. Ստեփան վաշայի կարգադրած առնետակութեան պատճէնը:

«Սրբազան Հայր և Տեառք երեսփոխանք:

«Ամեն բանէ առաջ պարտականութիւն մ'ունիմ առ ժողովն, զոր քաղցր է ինձ կատարել, և զոր փութամ կատարել այն է՝ շնորհակալութիւնն ընծայել Ձեր ինձ ցոյց տուած փառահաւորութեան և ըրած պատուոյ համար. գիտեմ որ այս իմ արժանեաց արգասիք չէ՝, այլ քաջալերութեան ջուէ մը զոր տուած էք Ձեր մէկ հինգրոցայ քայց նորեկ ընկերին: Այսու գօտեւորեալ՝ ուխտեմ կատարել խղճի մոռք իմ պաշտօնն որ միակ է, այսինքն օրինաց հետեւելով ժողովն ըստ կանոնի ղեկավարել, և զոր դիւրութեամբ կատարել յուսամ եթէ դուք ձեր կրկին պարտաւորութիւնը կատարել ապախտ չառնէք, այն է՝ ձեր ընտրած Ատենապետին յօժարամիտ հետեւել, միանգամայն անոր թերութեանց ներողամիտ ըլլալ եթէ այսպէս երկուստեք պարտիք կատարուին, ժողովն իր նուիրական պաշտօնը յաջողութեամբ գլուխ տանելու ճանքան կը մտնէ: Ինչ է ժողովին պաշտօնը,

հարկ չկայ երկայն բացատրելու. ժողովին պարագն ու պաշտօնն է Ազգին անցեալին աւանդապահ ըլլալ: Ներկայն տնօրինել և ապագայն պարտասել: Տեառք իմ, գիտե՛ք որ այս պաշտօնը կատարելու ո՛րքան բարեյաջող միջոցներ պարգեւած են մեզ երկինք: — Կապրինք տէրութեան մը հովանոյն ներքեւ, որ մեր առնին դորձերը մեր ոգւով տընօրինելու արտօնութիւն շնորհած է մեզ, և իր ընդարձակ սահմաններուն մէջ վայրենաբարոյ վրանաբնակ ազգաց քով խաղաղաբէր, աշխատասէր և եւրօպական կարգօք կանոնօք բարեկարգեալ ազգեր պատասխարելու և զամենն ալ կառավարելով՝ աշխարհ կը զարմացունէ իր ազատամիտ և վեհանձն աշխարհավարութեամբ: Ունինք Պատրիարք մը, որ իր եկեղեցական կոչման արժանաւայել խնկիր բարեմասնութեանց հետ՝ ազգասիրական եռանդով վառ հօգի մը և ժամանակին վայելուչ ուսմամբ և գիտութեամբ մշակեալ միտք կը կրէ, և իր հեղահամար բնաւորութեամբ և ուղիղ ու ճարտար քաղաքագիտութեամբ՝ տէրութեան, նախարարաց, ազգայնոց, օտարաց, բարեկամաց և մինչև իսկ ատելեաց սիրտն իրեն դաւած է, և որ այսպէս ամենուն սիրովն ու անխնայութեամբ շըրջապատեալ գահէն ինքնակամ հըրաժարման առաջարկութեամբ Արարատ աշխարհը կը զարմացնէ: Ունինք օրէնք մը, Սահմանադրութիւն, որ այսօր հին ու նոր աշխարհի մէջ մեծ ու պղծիկ բազմազան ազգեր կը կառավարէ: Ունինք ներքին կանոնադրութիւն մը, շնորհ ազնուամիտ և ազգասէր անձանց, որ այսօր հզօր Բաղլամէնդներ կառավարելու կը բաւէ: Ինչ կը պակսի մեզ ուրեմն յաջողուլ, եթէ ո՛չ, բարեկամք, աշխատասիրութիւն, և առաւել քան զամենայն՝ յարատեւութիւնը շնորհ: —(Մ' ուրեմն, Տեառք, ձեռն ի գործ արկանենք, և աշխատենք Սահմանադրութեան այս ԱՅ ԲԵ ԶԻՄՆԻՆ մէջ ճշմարտապէս սահմանադրական Ազգ մ'ըլլալ. մենք, Ազգային Ժողով, օրէնքն յարգելով, սիրելով թէ՛ և պակասաւոր, գործադրենք ու գործենք ու օրինակ բարի հանգիստանք ազգայնոց. կանոնաւոր յարատեւենք ժողովին, խնդիրները լուծենք վիճաբանելով և ո՛չ վէճով. կատարենք մասնաւոր սահմանադրական ազգային ժողովոց առաջին և ամենամեծ պարտաւորութիւնը, այն է համարառութիւնն ընել վարչութեան գործոց, և ազգին երուստից կշիռը սահմանել: Այսու առիթ և գրգռու կուտանք այլոց՝ իրենց պարտականութիւնը կատարել, և կը յաջողինք տեսնել ընտրողներին՝ որ իրենց վրայէն տնտրեւորութիւնը թօթափելով ընտրութեանց սովորներուն նախանձով և սիրով կը մերձենան. կը տեսնենք նաեւ ընտրեալներին՝ որ իրենց կոչման փոյթ կընեն արդեամբ պատասխանելու ու կը վերցունեն սրտերնուն մէջէն յուսահատութեան զգացմունքն, որ ամեն բարեաց աղբիւրները կը չորցունեն: Վերջապէս Ազգին այն ընտիր անհասներն որ այսօր Տէրութեան և այլոց գործոց մէջ իրենց տաղանդով փայլ ի փայլ Հայ անուան պարմանք կը բերեն, կուգան փութալ մեզ աշակցելու, և ամենին մեր սիրելի Պատրիարքին բոլորը ձեռք ձեռքի տուած կաշխատենք Ազգին օգտին, որոյ ամեն կարողութիւնները մէկտեղուելով ամեն կարօտութիւնները լցուելու յոյս կը ծագի Աստուծով: »

Կարինէն մայիս 15 թուով մեզ գրուած նամակի մը մէջ հետեւեալը կը կարդանք:

«Տեղւոյս առաջնորդ Գերապետիւ Տ. Յարութիւն Ս. Արք. եպիսկոպոսն՝ անխնայ ջանք իւր պաշտօնը կը փառաւորէ: Կառավարութեան առջև մեծ համարում ունենալով՝ շատ մը կենսալից խնդիրներ լուծած է, ինչպէս և տեղւոյս կալուածական խնդիրն, որ Կարնոյ համար կենաց և մահու խնդիր մ'էր: Այս օրերս ինքնաբերաբար հանգանակութիւն մը բացաւ, և ցարդ յիտուն հազարի մօտ գումար մը հաւաքելով՝ Մասնաժողով մը կազմեց, որոյ անդամներն են Մեծ. Դանիէլ Էֆէնդի խաւաճեան, Ղուկաս Ա. Տ. Աղաբեան, Կարապետ Ա. Սարաֆեան, Յակոբ Ա. Յովսէփեան և Գիւրգէն Գապար աղա: Այս մասնաժողովն անդադար կաշխատի, և բաւական փայտ, քար և այլն առաւ: Գանի մ'օրէն ընդարձակ ուսումնարանի մը շինութեան պիտի ձեռնարկուի, և այս մասին քաղաքիս կարօտութիւնը պիտի վերնայ: Ճշմարտն ըսելով՝ այս միջոցին այսչափ դրամոց հանգանակութիւնն անսրտելի կերպիւ կապացուցանէ թէ կարնոյն մեծ սէր ունի իւր վաստակաւոր Հովտին վրայ, և նորա ձայնը միշտ զօրաւոր է ազգին բարիք յառաջագնելու համար: »

... Խմբագիր Տէր:

Կը խնդրեմ, որ ազգային վարչութեան մատուցած հետեւեալ գըրութեան անկիւն մը շնորհէք ձեր արդարասէր լրագրոյն մէջ:

Տ. Թադևոս:

Ամենապատիւ Արապան Պատրիարք Հայր և Վսեմալուք Ատենապետ Ազգ. վարչութեան Գաղաքական ժողովոյ:

Ասկից առաջ Սահմանադրութեան խորհրդոյ հաշուետուարաց մէջ հաշուաւորող անդամները ըլլալն ստորագրութեան ներքեւ հաստատած էի: Պատկանելի ժողովը նոյն տուեալները վերաքննութեան չենթարկեց, հետեւեալ այն տուեալները խորհրդակալ անունին չիցցին ազատի, և չեն կարող ազատի յաւիտեան՝ առանց ուրիշ ձեռնհաս հաշուակալաց օրինաւոր պայմաններով վերաքննութեան, փասն զի կրկնապարտաւորութեամբ գրուած հաշիւներու վիճակն երևան չանելու ձեռնհասութիւնն հաշուակալաց միայն կը վերաբերի, և տարակոյս չկայ՝ որ այս տեսակ տուեալի մը վրայ հաշուակալի մը ամբաստանութիւնն ուրիշ հաշուակալաց վերաքննութեամբ միայն կրնայ ջրուիլ կամ հաստատուիլ:

Իմ ամբաստանութեան վրայ Սահմանութիւնը կը բողբեն. խնդրեմ Տնտեսական խորհրդոյ կը յանձնուի՝ այն պայմանաւ՝ որ եթէ ժամանակին Տնտեսական խորհրդը նոյն տուեալաց հաշուեցոյցը 31 օր եկեղեցւոյ բաղը կախած և բողբեող չէ գտնուած, տուեալները չը վերահանին, ապա թէ ոչ՝ վերաքննուին: Ասոնք բոլորն ալ ինձ անձանթ ըլլալով, որ մը Պատրիարքարանի Դիւանապետ թովմաս Էֆէնդի ղեկաւորեան մէջ արձակ համարձակ հետեւեալ խօսքերը կըսէ ինձ բարձր ձայնիւ թէ՛ ատիկող թող մը՝ յանդիման տակն ու վրայ ըրիք, ժամանակին Տնտեսական խորհրդին հաշիւները վաւերացուցէք է եղեր, տուեալները մարտը են և այլն: Այս ծանր խօսքերը պատուոյ զգացում վերաւորելով կը հարկադրիմ հետեւեալ դիտողութիւնները խնամարհարաբար Պատկուելի ժողովոյ ու շաղկապեալ յանձնել:

Այսինքն վերաքննութիւն՝ ժամանակին Տնտեսական խորհրդին օրինական պայմանները տեղը տարած, և նոյն տուեալները վաւերացուցած ըլլայ. արդ՝ քանի որ նախորդ և ներկայ թաղ. խորհրդներն առաջը այդ վաւերացման կարեւորութիւն տալու գանձեց ինձ յանձնեցին:

ի քննութիւն և խնդրեցին որ իրական
գործողութեանց համապատասխանող ճիշդ
հաշուեցոյց մը հանեն, ո՛չ ապաքէն Տըն-
տեսական խորհրդոյ վաւերացումն ինք-
նին ջրուած կը համարուի և թաղեցւոյ
բողոքելու իրաւունքն իրենց վերադարձ
ձած :

Բ.— Ենթադրեմք թէ՛ Թաղ խորհր-
դոյ տուածները Տնտեսական խորհր-
դոյ կողմանէ վաւերացած ըլլայ՝ օրինա-
կան պայմանաց կատարմամբ և նոյն տու-
մարները դիպումածով հաշուակալի մը
մեք անցնելով, մանրախոյզ քննելէ յետ-
ոյ՝ զանոնք իբր խաղաղութիւնն պա-
րուակող ամբաստանէ : Ո՛չ ապաքէն ա-
սով նոյն տուածներն ամբաստանութեան
ներքեւ կ'ընան, և Տնտեսական խորհր-
դոյ վաւերացումը կոչնչանայ : Թէպէտ
այս պարագայիս մէջ թաղեցին բողոքե-
լու իրաւունք չունենան, բայց տուածն-
երն ալ վերաքննութեան ազատ չեն կըր-
նար մնալ, զի դեղծում մը դեղծումով
չկրնար արդարանալ :

Գ.— Ենթադրեմք թէ՛ Թաղ խորհր-
դոյ տուածներուն մէջ մատակարարող
մարմինն 40000 դրը պարտք և 20000 դր
պահանջ ցուցուցած ըլլայ : այս ինչ անձի
40000 դր վճարեցինք, այս ինչ հասցի-
ներէն 30000 դրամ առինք ըսած ըլլայ,
և այսպիսի հաշուեցոյց մը ներկայացնէ
Տնտեսական խորհրդոյ : Տնտեսական խոր-
հորդն ալ 31 օր պայմանաժամ սոյ թա-
ղեցւոյ, թաղեցիք չը բողոքեն, Տնտեսա-
կան խորհուրդն ալ հաշուեցոյցը վաւե-
րացնէ : Բնական է՝ որ վերջիցեալ դու-
մարաց իրականացան ճիշդ ըլլալը, զայն
մատակարարող մարմինը, կամ նոյն մարմ-
նայ յաջորդող միւս մարմինը կարող է
գիտնալ, հետեւաբար այս պարագայիս
մէջ թէ՛ թաղեցին և թէ՛ Տնտեսական
խորհուրդը սեղեկութիւն չունենալով
դիտողութիւն ընելու ալ պատճառ մը չեն
ունենար : Ասկից յայտնի կը տեսնուի՝
թէ վաւերացումը հաշուց ճիշտ ըլլալուն
չը պատկանիր, այլ այս 31 օր պայմանա-
ժամին լրանալէն ետեւ թաղեցիները բողո-
քելու իրաւունքը չը կ'ընէ միայն վճր մ'է
իր բնութեամբ : — Արդ՝ վերջիցեալ վա-
ւերացումը կատարուելէ ետեւ ժամանակ
անցեր, պարտատէրները ներկայացեր
են նախորդին կնքով և ստորագրու-
թեամբ, տուածներն մէջ նշանակուած
40000 պարտքին տեղ 55000 պահանջներ
են, և քննուելով հասկցուեր է՝ որ 20000
պահանջներն 5000 ը առուեր է : 30000
դրէն տեղ 45000 պէտք էր անցնէր : այս
ինչին 40000 դրը ստակ ընաւ չէ արուեր
և այլն : այսպիսի պարագայի մը մէջ միթէ
Տնտեսական խորհրդոյ վաւերացումը կըր-
նայ սոյն իրական գործողութեանց մէջ
որ և իցէ զորութիւն մը կամ արժէք մը
ունենալ, բնականապէս ո՛չ : այսպիսի
պարագայի մը մէջ վաւերացումն ոչինչ
և հաշիւներն անվաներ համարուելով
տուածները վերադարձ քննութեան են-
թարկել հարկ կըլլայ : ահա այսպէս ըրած
են Սամաթիոյ նախորդ և ներկայ Թաղ
խորհուրդներն ալ :

Ասոր հետ մէկտեղ սա ալ կըլլուի մամ
ծանուցանել պատկառելի ժողովոյդ, որ
այն տուածներն զորս քննելի և իբրեւ
խաղաղութիւնն ոգարուեալով ամբաս-
տանցի, Տնտեսական խորհրդոյ վաւե-
րացումը կրած չեն երբէք :

Արդ, Ամենապատիւ Սրբազան Հայր
և վսեմաւոր տոնանկալը, քանի որ ազ-
դային գիւտնապետ մը 'ի պաշտօնէ և
Օրագրոյ խմբագիր Օգոսէն Էֆէնտի ալ
անպաշտօնապէս, մէկն 'ի Պատրիարքա-
րան և միւսը Ուստիկանութեան Պատժա-
կան տոնին առջև վերջիցեալ խնդրոյն
նկատմամբ զիս խառնակիչ և զրպարտիչ
կանուանեն յանդիման հարկ անհրաժեշտ
կը համարիմ վերջոյբեալ դիտողութիւնն
նաեւ թէ՛ Սամաթիոյ նախորդ Թաղ խոր-
հորդը տուածաց մասին ըրած ամբաս-
տանութիւնն կարող եմ հաստատել, եւ
թէ յիշեալ տուածներն ըստ օրինի կար-
գեալ հաշուակալաց յանձնաժողովոյ մը
քննութեան յանձնուին իմ ներկայու-
թեանս և եթէ չկարողանամ հաստատել
Սամաթիոյ եկեղեցւոյ սնտուկին իբր տու-

դանք քսան տկի վճարելու պատրաստ եմ
16 մայիս 1875 Մնամ . . .
Տ. Թաղապետ

Լէվոյցիկից դուռ մ'է մեզ Պ. Բա-
հատուրեանցը, որ ապրիլի 13ին Հիւ-
պըշման անուն երիտասարդ Գերմա-
նացին, որ երկու տարի է գնացել էր
վենետիկ Հայերէն լեզուն ուսումնա-
սիրելու, վերադառնալով Լէվոյցիկ
կարգացեր է այնտեղի համալսարանի
մէջ իւր առաջին դասախօսութիւնը :
Մինչև 50 Գերմանացի ուսանող երի-
տասարդներ և 10 պեղարդ պրոֆես-
սորներ լցունծ էին լսարանը : Նրա
դասախօսութեան նիւթն էր հաստա-
տել Հայոց լեզուի հնգկաւարդական
լինելը : Մ'նծ հմուտութեամբ պատանի
Հայադէտը ապացուցեց այդ և ար-
ժանացաւ երկարատեւ ծափահարու-
թեանց : Մեզս Հայաստան :

Պոզնանից հաղորդում են, որ Շրիմ
քաղաքի մի վաճառական, որ ընտրը-
ւեցաւ երգուեալ դատաւոր, խնդիր
է ուղարկել հրաժարեցնելու նորան
այդ պարտաւորութիւնից, ստեղծ թէ
ինքը չառ յիմար է և թէ չէ կարող
հետեւել դատաւորական վիճարա-
նութեանց : Խորհուրդ ենք տալիս և
մեր հատարական գործերին մաս-
նակցող յիմար անդամներին՝ այդպէս
անկեղծօրէն խոստովանել իւրեանց
թուութեանց մէջ . . . հաւատացած
կայէ՛ք, որ այն ժամանակ մեր գոր-
ծերը դանդաղ չեն ընթանալ :

Պետերբուրգի լրագիրներում
կարդում ենք, որ ապրիլի 27ին այն-
տեղի հոգեւոր ճեմարանի դահլիճում
Պրոֆէսոր Տրոյցկին պէտք է պաշա-
պանել հրապարակաւ աստուածա-
բանական գօրծարի աստիճան տա-
նալու համար՝ իւր երկասիրութիւնը
հետեւեալ վերնադրով : Հայոց եկեղե-
ցւոյ հաւատապատումը, որ դժադ-
բել էր Ներսէս Շնորհալին աստուա-
ծահաճող Յուդայ կայսեր Մանուէլի
պահանջմամբ : Պատմական վարդա-
պետական քննութիւն կից՝ Հայոց ե-
կեղեցւոյ և ուղղափառ եկեղեցւոյ
միութեան հարցի հետ : Նոյն :

Ազգային մանկուսն դատարա-
կութեան նախնալ անձինքն ու հա-
տաւորութիւնները քաջալերել սիրելի
պարտականութիւն մը ճանաչած ըլլա-
լով մեզ, հաճութեամբ սրտի կը հը-
րատարակենք հետեւեալ նամակն ու
աղղը :

։ ։ ։ Խմբագիր Մատիս պատուա-
կան լրագրոյ :
Հետեւեալ աղղը Զեր պատուա-
կան լրագրոյն յառաջակալ թերթին
մէջ հրատարակելնիւ կըրնդրեմ եթէ
պատշաճ կը համարիք սա և կըլլանդ-
րեմ, որ քանի մը տող խմբագրական
դիտողութիւն յաւելցնելով Զեր Մե-
ծապատուութեան կողմանէ՝ Ռուբին-
եան կրկին վարժարանները բարե-
հաճիք պատուել Զեր պերճախօս և
պանծալի գրչով :

Ընդունեցէք . . . Տէր, մեր խորին
յարգանաց հաւատարմ.

Արթուր Զեր

Արթուր Զեր

Արթուր Զեր

Արթուր Զեր

Արթուր Զեր

Արթուր Զեր

Արթուր Զեր

Արթուր Զեր

Արթուր Զեր

Արթուր Զեր

Արթուր Զեր

Արթուր Զեր

Արթուր Զեր

Արթուր Զեր

էֆէնտի Մամիկոնեան, որոյ աղիւ-
բնաւորութիւնն և դատարարու-
թեան սիրահար ոգին լսար տղայնոց
յայտնի է, բարեհաճեցաւ մինչև յիւ-
րաւորած մեր՝ իւր բնական կրկին վար-
ժարանաց ընդհանուր խնամակա-
լութիւնը յանձն առնալ 'ի պատիւ
մեզ և 'ի յառաջիկայ թիւն վարժա-
րանաց աշակերտաց :

Խոյ վարժարանաց Ներքին վե-
րատեսչութիւնը բարեհաճեցաւ ըն-
դունել մեր վարժարանաց հիմնադ-
րութեան 'ի վեր մեզ աշխատակից
և վատակալից Մեծ. Ռէթէս Էֆէն-
տի Թաղապետ, դպրոցիս անալիս
Հայկարան դատաւորն :

Ռուբին եմք որ այն երկու Մեծ.
էֆէնտիները թէ՛ մեր և թէ՛ պատ-
ուարժան ծնողաց սիրոյն յանձն ա-
ռին այդ բազմազաւ պաշտօնը ազ-
դատարար կատարել :

1875 մայիս 27 Արթուր Զեր
Բերա—Բանկալթի Տէր և Տնօրէն
Ռ. կրկին վարժարանաց

Լ. Օ. Գ.

Մեր նախնիք թուով հրատա-
րակեալ Ա. Ն. Շահնազարեան վար-
ժարանի յայտարարութեան մէջ նը-
շանակեալ դատաւորաց ցանկէն մն-
ացմամբ դուրս մնացած է Մկրտիչ
էֆէնտի վարժապետանի անունը,
որ Տիեզերագրութեան, Երկրաշարժ-
ութեան, Թուարանութեան, Արեւի-
րոյի և Տօմարակալութեան դասա-
տու է յիշեալ վարժարանի Գ. Գ. և
Ե. դասարանաց :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԸՆԴՈՒՆԵԼՆ

ՀԵՂԵՍԿ

* * * ՏԵՐԱՅ

Թարգմանեց Մ. Մամիկոնեան

Զմուռնիա Տպագր. Տէպէն

Այս գիրքն արդեաւ հասնում էր գործ
մ'է. ոչ բանակալի, և ոչ պատմա-
թիւն է. կնչալիս որ վերնադրին ըստ
բաւականին կը յայտնէ :

Անիմալի յօդուք զոհանային կար-
գելով Ռուսիայի քննութիւն, Գամիւ-
սի ընթացքը բնութեմ է :

Սոյն վիպատանութիւնը 4 հատո-
րէ բաղկացեալ պիտի ըլլայ որք հիւ-
րաւորութեան հրատարակալին : Իւ-
րաքանչիւրին կը լինէ 12 դահլիճան :

Կը գտնուի Կ. Պոլսի Չաղմաքը-
լար փողոց թիւ 20 Գալաֆեան Եղ-
բարց գրատունը, եւ Զմուռնիա Տէ-
պէնեանց վաճառատունը :

ՆԱԽԵՐԱԴԻՐ ԵՐԿՈՅ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՎ ԵՂԵՍԿ

Հրատարակեց Ե. Մ. Տէպէն

ՏԵՐԱՅ

Ամեն Հայ գրաւաճառաց քով կը

գտնուի : Դին կէս արծաթ մէծիւս :

ՊՏՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՏԵՆԱՅՐՈՒԹԵԱՆ

ԳԵՂԵՍԿ ԵՎ ՆՈՐ ԳԱՐՈՒՅ

ՅԱՐԵՆԻՍԻՍ

Ազգային վարժարանաց համար

երկու հատոր

Վենետիկ Միքիմ արեան Տպարան

Ազգային մանկուսն ուսման եւ

ընդհանրապէս ամեն բանասիրաց ըն-

թերցման արժանի ընթերցանաւոր

թիւն մ'է ի հմուտութեամբ, պարզ

աշխարհաբան լինելու և շարժարտած :

ՏԱՐԵՐԻ

ՀՈՒՆՏՐԱԿԱՆ ԱՐՈՒՆՏ

Երկարաւորութիւն

Հ. Մամիկոն Կ. Գ. Գանի արեան 'ի Մեքի-
թարեան ուսումն

Ազգային վարժարանաց մէջ մին

չեւ ցորդ գործածուած ճարտարա-
նութեան գանձարքերուն ամեն ըն-
տիրն ու կատարեալն է սոյն գործը :
Կը գտնուի Ղալաթիա Միքիթար-
եանց գրատունը 'ի Սեդրոս խան, եւ
Կ. Պոլսի Պ. Յ. Մարգարեանի եւ այլ
գրաւաճառաց քով : Առաջինը զինն է
9 Փրանք, երկրորդն 375 Փրանք :

ՍՂԻՔՍԱՆԴՐ ՎԵՑ

ՔԵՐԹՈՒԱՅԻ

ՆՈՒՐԱՅԱՆԻ

Թարգմանեց Մեքիմ Կ. Գանի

Մարգարային հոգեւոր էութեան

նպատակին կամ մտքոյ եւ Աստուծոյ
մէջ եղած յարաբերութեանց վրայ
սրտագրած եւ գեղեցիկ բանաստեղ-
ծութիւն մ'է, ընթերցման արժանի :

Կը գտնուի Կ. Պոլսի Պ. Յ. Մար-
գարեանի կը ծախուի նաեւ Հայ դը-
րաւաճառաց քով 'ի Գին 4 դրու :

ՏՈՒԹԻՒՐ Մ. ՓԱՓԱՋԵԱՆ

Իր բնակութիւնը հաստատած է
'ի Ղալաթիա, Հայոց եկեղեցւոյ փողոց
թիւ 12 տունը, որ պատրաստ է ա-
մեն օր մինչև կէսօր հիւանդ ընդու-
նիլ, եւ երեքշաբթի օրերն ալ ձրի
դարմանել :

ՆԱԽՆԻՑՈՒՄ

Օրթոգրիկ փառնկա թաղը Սէթի
փողոցը 6 թիւ տունը ծախու է : Ունի
վեց սենեակ հանդերձ ընդարձակ
սրահներով, յրճոյ եւ փոքրիկ պար-
տէզ մի :

Ուզողը Օրթոգրիկ Մըքտար Թա-
կոյ աղային պէտք է գիտէ :

ԿԱՐԻ ՄԵՔԵՆՍՅ

Եւրոպոյ այլ եւ այլ քաղաքաց
մէջ շնորած կարի բազմապիսի մե-
քնութիւն մէջ՝ Նիւտոնի գործարանէն
կաշմանքն ամենէն ընտիրն են թէ՛ ամ-
բութեան, թէ՛ դիւրաւ գործածու-
թեան, թէ՛ ձեւի գեղեցկութեան եւ
թէ՛ արժանութեան կողմէ, որով յիշ-
եալ մեքնանքն ընտանեաց համար
ամենապիտանի գործիք մ'ըլլալէ դատ-
գեղեցիկ կարասի մ'ալ են :

Ի Լ Ա Ն

Գալիսիա տաղիք տէկիւմէնի հա-
սրալընտան օրու պիտուի օրու-
նաճաղ օրան 400,000 գր. քէպէկին
համար սիմ մէծիւմէնի իկլիմի պիտու
զրաւ օրուադ պէր մէծէ վեշին իյֆա
օրուադ ի զրէ պէշէր ըլլալի օն
Էրի փարալ օրուադ թաղիպի էօհ-
տէսիտէ օրու պիտուի օրու մինին
Էրիմի փաղար Էրիմի կիւնի գա-
րարը գալիսի վերիլէճէ լինալն, իշ-
թիւրալըն թաղիպ օրուալըն եւ վիլ
մէզընիւրէ Տարի Շուրլոյն անքէրիլէ
կիւմէլէրի :

26 մայիս 1875

Պապը Սէրասքէրի 3

Հէր Էրիմի եւալիտէ տօքսան սե-
նէսի չուպալըն նիհայէլին քաղար
թաղիպի լաշմիլէ փառաւաղը վալ
խէ, տօքսան պիւր սէնէսի մայիս նի-
հայէլինէ գաղար այնէն վէ եալսու
պէտէլէն արիլ իմ մէլէրի լաղըմ
կէլիլ թաղիլի մէզընիւրէն սօնրա
հէր քիմին եւալիտէ տօքսան սէնէ-
սիւտէն լաշմ փառաւաղը պիտու
խէ քաղար օրուալըն պալըն
նաղարըլա պաղընաղը մալիւմ
օյմադ իշին իւնը քէ յիլիլէ իւլ-
թիւրալ օյնտու :

15 Նիսան 1875

Պապը Սէրասքէրի

Պապը Սէրասքէրի

Պապը Սէրասքէրի

Պապը Սէրասքէրի

Պապը Սէրասքէրի

Պապը Սէրասքէրի


Պապը Սէրասքէրի

Պապը Սէրասքէրի

Պապը Սէրասքէրի

Les annonces pour la France sont exclusive-
ment reçues à Paris, chez M. Orain, 9, Rue
Drouot, et les annonces pour l'Angleterre à
Londres, chez M. E. Micoud, 12 St.-Peter's
Steert Islington.

ՄԷԼԱՆՕԺԷՆ
ՃԵՐՄԱԿ ՄԱՋԵՐ ՆԵՐԿԵԼՈՒ
ԴԵՐԱՉԱՆՆԵՐ ԴԵՂ



Որ մէկ վայրկեանի մէջ և ամեն
գունով կը ներկէ մազերն ու
մորուքները և ամեն զորութիւն
փնտա մը տալու և ամեն ըն-
կաւ հոս մ'ունենալու ։
Կըզ տնուի Տէլլա Սուտայի Չո-
պան օղլուի և Քիւշիւքեանի
դեղարանը ։

ԿԱՐԻ ՄԵՔԵՆՍՅՅ
ՆԻՒՄԷՅ ՆԻ ԲՆԿ
Կատարեալ օրծովեան մեծ վաղարկ
ստացած 1873ին Վիէնայի տիւզերա-
կան արուեստաշանդէսէն ։



ՏԵՍՄԱՐԷ ՆԻ ԴԻՆԷ
Պարզ մեքենայ, 3,3անդր.
կիրա ։
Նայն յենարանով և ըն-
կազմէն սեղանով որ կրնայ թէ՛ ձեռ-
քով և թէ՛ ոտքով շարժիլ, 4,10 ։
Նայն կիցաւոր, կատարեալ օրծովեան,
4,40 կիրա ։
Նայն յենարանով 5,11 կիրա ։
Նայն նորագոյն ի սլետս ընտանեայ,
7,40 կիրա ։
Նայն Տիւտոր կոչուած, 8,40 կիրա ։
Նայն Ուէլքը և Ուիլլըն կոչուած 6,6
կիրա և աւելի ։

ԱՌԱՐԵԳԱԿՆ



Պ. Վ. Ծանփի տալիս յանձնարարու-
թիւններ որ կընդգրկեն զուրկ զինե-
լու և դուրսէն բերել տարու ։

ՄԵՏ ՏՈՒՆ ԴԵՂԱՐԿՈՒԹԵԱՆ
ՆԻ ԴԵՂԱՐԿՈՒԹԵԱՆ
Վ. ՏԱՆՆԻ
Բէր՝ Մեծ Գողջ Աղաճաճ Բէ- 77.
ՆԻ
Կ. Պօլի- Կառն-ընէ հրապարակ Բէ- 1—2

Ամեն տեսակ դեղորայք և քի-
միական արտադրութիւնը խաղաղ-
անգղիական, Գաղղիական և Դերման-
նական, նոյնպէս այլ և այլ արտադ-
րութիւնը խնամով պատրաստեալ ի
Պ. Վ. Ծանփի ։ Ամեն տեսակ հան-
քային ջուրը, արուեստական սուռոյ
ամեն ժամու մէջ ։ Վիրաբուժութեան
և մանկանց մարմինն ուղղելու գոր-
ծիք, Գառնուէ նիւթեր ու գործիներ,
Մոյճաթօթի մեծ միւլերը ։ Գիշերուան
ամեն ժամերուն մէջ դեղորայքի տ-
րագ և ճիշդ պատրաստութիւն ։

Միանգամայն Պորտոյի Ուէնի, ըմ-
պանիոյ, Հանգարիոյ և Թուրքիոյ
գինիներու մեծ միւլերը ։ Քոնեալ, ա-
մեն տեսակ ոգեղից ըմպելիք, անդա-
բար նիւթեր ։ անուշահամութիւնը,
այլ և այլ տեսակ մազի ներկ, որոյ
ամենէն ընտելին ու փորձեալն է Տիւ-
բէնի ջուրը, եւ այս ամենը խիստ չա-
փաւոր գնով ։

ԴԵՂԱՐԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՐՈՅ ՓԱՐԻՉԻ
Ա. Բ. Մ. Ս. Ե. Դ. Ս. Ս. Ս. Ս.
Ե. ԿԻՒՅՈ
ԿՈՒՊՐ (ԳԱՐԻՍԱՆ) ԿԻՒՅՈՒ
ՀԵՂԱՆԿ ԹԱՆՁՐԱՑԵԱԼ

Պ. Կիւյոյ յաջորդեալ կուսարին անտանելի դառնու-
թիւնն ու կծուութիւնն անհետացնելու և խիստ զիւրա-
ւոյծ ընելու ։ Այս յաջող զիւրաւն օգուտ քաղելով՝ կուսարի
թանձր հեղուկ մը կը շինէ, որ փոքր քանակութեան մէջ
բազում ներդարձիչ սկզբուէր կը պարունակէ ։ Ուստի Կիւ-
յոյ կուսարը՝ հասարակ կարաջուրին ամեն օգուտներն ունի
առանց անարտաճութիւններն ունենալու ։ Բաւական է
սուրճի գոլ մը լցնել դաւաթ մը ջուրի մէջ, և դերա-
զանց կարաջուր մը ձեռք կը բերուի առանց անարտաճ հա-
մի ։ Այս կերպով ամեն մարդ կրնայ ինքնին կարաջուր շի-
նել սլետք եղած միջոցին, ուղածին չափ թեթեւ կամ զո-
րաւոր, որով թէ՛ ժամանակի խնայութիւն, և թէ՛ ժո-
խաղութեան դիւրութիւն կուսնեայ, և կուսարի անհա-
ճոյ գործածութեանն ալ ազատ կը մնայ ։


Կիւյոյ կուսարը, հարուստի, թոքառաջից հիւանդու-
թեան (պրոնցիթ), հազի և այլ լանջոյնի հիւանդութեանց
մէջ ուրիշ ամեն հեղուկ դեղերու տեղն օգտակարապէս կը
բռնէ ։ Համաճարակ հիւանդութեանց ժամանակ ալ քօթ-
ուայի, փորութեան, տենդի և ուրիշ այս տեսակ հի-
ւանդութեանց դէմ շատ օգտակար ըլլալը մասնաւորապէս
վիայուած է բժիշկներէն ։

Վերջապէս մեծ յաջողութեամբ կը գործածուի
ԹՈՒՄԱՍՅԱՆ ՀԻՒՄԱՆԻՏԱՆ
ԹՈՒՄԱՅԻ
ՀԱՐՈՒԹԻ
ՀԱՅԻ
ԿՈՒՊՐԻ ԳՐԱՐԿՈՒԹԵԱՆ
ՓՈՂԻ ՀԻՒՄԱՆԻՏԱՆ
ՓԱՐԿՈՒՄԻՍ ԳՐԱՐԿՈՒԹԵԱՆ ԴԵՂ ։

Ամենէն առաջ Պրիստի և յետոյ ամեն տեղ եղած
փորձերէ հաստատուած է որ կուսարը թոքախտ և թոքա-
ռաջից հիւանդութիւն ունեցողներուն խիստ օգտակար է ։
Թոքախտը չորձիկի, բայց հիւանդներուն մեծ սխալմանը և
հանգստութիւն կուսայ ։ Դանտը հոգեցնող հազը կը
դադրեցնէ ։ և շատ անգամ հիւանդներուն կեանքը կեր-
կընցնէ ։ Այսպիսով միայն բաւական է հիւանդաց ուղադ-
րութեանն արժանի ընելու այս դեղը ։ Բայց պէտք է լաւ
համոզուիլ ։ որ այս դեղը մասնաւոր հիւանդութեան նոր
սկսած ժամանակը պէտք է գործածել ։ Թեթեւ հարուստ
մը կրնայ թոքառաջից հիւանդութեան փոխարին այս պատ-
ճառաւ, մէկը հազալ սկսեալ ալ այս դեղը պէտք է
առնել, որովհետեւ ամեն տեղ քաղէ ։ Կուսարի տկարու-
թիւնն ունեցողներէն շատերը կրճախաւ ունենան չին
դիտեր և շատ անգամ ինքզինքնին հարուստ կամ թեթեւ
կը գտնուի Բէրա և Կ. Պօլիս Գառնուէ և Եղարայ,
Վիլիցի և Գառնուէնի դեղարանները ։

Թոքառաջը ունեցած կը կարծեն երբոր թոքախտ արդէն
սկսած է ։
Փարիզի Եօթն հիւանդանոցաց, ինչպէս նաեւ Պրի-
ստի, Վիէնայի և Լիդսի մէջ Կիւյոյ կուսարով փորձեր
եղան և խիստ յաջող եղան ։
Ահաւաստի բժշկական Սքայրէլ լրագրին մէջ Տքթոր
Ֆիլիքս Բարձի ըրած գիտադրութիւնները ։
« Պրիստի մէջ Պ. Տ. . . 47 տարեկան, Եօթն տարիէ
ի վեր թոքառաջից հիւանդութիւն ունենալով, վերջին
ծայր տկարացած էր ։ Գեղերէ ճանճրացած ըլլալով, մեծ
գոգաւորութեամբ յանձն առաւ Կիւյոյ կուսարը փորձել,
Փարիս մ'ուսուր մէջ մարտկոտիան զօրութիւնն անթնցաւ,
հազը քիչցաւ, և վեց շաբաթ զարմանէ ետեւ բոլորովին
գոյգրեցաւ ։ Երեք ամիսն ալ կատաւելապէս բժշկեցաւ ։ Պ.
Տ. . . մինչև հիմա կը գործածէ այս դեղը, և երբեք կընէ
որ բնաւ չսխալի թոքառաջ ։
Գարձեալ ։
« Պ. Չ. . . 45 տարեկան, չորս տարիէ ի վեր թոքախտ
եղած էր, բերնէն յաճախ և առատ արիւն եկած էր,
վերջոյն մահաւոր միջոցին մէջ էր ։ Կիւյոյ կուսարը տը-
ւի, և կարծես հաշտ գործեց հիւանդի վրայ ։ Տարիէն
աւելի է որ կը գործածէ, և հազը զրեթէ բոլորովին դադ-
րած է ։ Չեմ ըսեր որ այս դեղը Պ. Չ. . . թոքախտ կա-
տարեալէս պիտի բժշկէ, բայց տարակոյս չկայ որ անոր
կեանքը պիտի երկարեցնէ ։
« Պէտք է աւելցնել, որ Կիւյոյ կուսարին գործածու-
թիւնը շատ օգտակար եղաւ մէջ ուրիշ բուսական տաք հե-
ղուկներ գործածելու հարկ չթողուր ։
Կիւյոյ կուսարին ամեն մէկ շիշը կրնայ տասներկու
լիտրի չափ կարաջուր շինել ։

Ա. Չ. Դ.
Կիւյոյ կուսարին շատ ծախուի որ իր օգտակար յատ-
կութեանց ապացոյց մ'է, բայց յօթիւ նմանողութեանց և
խարդախեալ բաղադրութեանց առիթ տուած է, ինչպէս
որ բազմաթիւ ճարտար քիմիագործներու քննութիւններէն
հաստատուած է ։
Չուղեւով բարդական պատասխանատուութիւն մը վը-
րաս բերել, որ ինձ չվերաբերիր, կը յայտնեմ թէ ես մի
միայն իմ չինած բաղադրութեան հարազատութիւնն ու
լաւութիւնը կ'երաշխաւորեմ ։ Ուստի դնողները պէտք է որ
չխնդիր վրայի կանանց պիտակին և անոր պարանոցին փաթ-
թեան երկային վրայ հետեւ-
եալ ստորագրութիւնը պահան-
ջեն ։



Այս լրագիրը չարաթիւ երեք անգամ
կը հրատարակուի, երեքշաբթի, հինգշաբ-
թի և շաբաթ օրերը, Բաժանորդագրու-
թեան տեղերն են Կ. Պօլիս Զինիլի խան
վերի տարի թիւ 45 Մասիսի խմբագրատուն
իսկ գաւառաց մէջ հետեւեալ հոգա-
բարձուաց սենեակները ։
ԻԶՄԻՐ. Սափիան աղա Տէտեան.
ՆԻՎՈՍԻՒՄ. Խորով Է. Ք. Իսիլեան.
ՊՐՈՒՅԱ. Սափիան աղա Թանկէրեան.
ԹԵՔԵՐՏԱՆ. Յովակիմ աղա Ուղա՝
արդեան.
ՏՐԱՊԵՏԱՆ. Խաչատուր աղա Մանուկ-
յան.
ԿԱՐԱՅԻՒՄ. Կարապետ աղա Մանուկ-
յան.
ՄԱՐՏ. Մկրտիչ աղա Փօթիկեան.
ՆԱՏ. Մ. աղա խաչիկեան.
ՖՈՒՄԱՆ. Մկրտիչ աղա Աճեան.
ԵՐԶՐԱՅ. Թադէոս աղա Բաղրա-
տունի.
ՍԱՐԴԻՆԻՍՏԱՆ. Սրժ. Տ. Ուրբէն.
ՍԵՐԻՒՄ. Զարգանդէն ասորագրուի ու-
գործներն առ տեղերէն մէկուն հետ կրնան
թղթակցիլ ։

ԽՈՒՄԱՆԻՏԱՆ—ՏՆՈՐԷՆ
Կ. Ս. ԻՍԻՒՆԵԱՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼԻՍԿԱՐՈՅ
Կ. ՊՈԼԻՍ ԶԵՆՈՒՄ ԽԱՆ

ՀՊԵՆԻ ԳԵՄ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

NORTH BRITISH AND MERCANTILE INSURANCE COMPANY		NORTHERN ASSURANCE COMPANY	
ՆՈՐԹ ԳՐԻԹԻՉ ԷՆՏ ՄԵՐԿԵՆԹԻՆԻՍԻ	ՆՈՐԹ ԶՐԻՆ	ՆՈՐԹ ԶՐԻՆ	ՆՈՐԹ ԶՐԻՆ
Լանքայն և Լանքայնի օդահանգ-Բեռն	Լանքայն և Լանքայնի օդահանգ-Բեռն	Լանքայն և Լանքայնի օդահանգ-Բեռն	Լանքայն և Լանքայնի օդահանգ-Բեռն
Ընկերութիւն Անգլ. Լ.	Ընկերութիւն Անգլ. Լ.	Ընկերութիւն Անգլ. Լ.	Ընկերութիւն Անգլ. Լ.
Բաժանորդ ագրեալ գրամագրուի 2,000,000	Բաժանորդ ագրեալ գրամագրուի 2,000,000	Բաժանորդ ագրեալ գրամագրուի 2,000,000	Բաժանորդ ագրեալ գրամագրուի 2,000,000
Վճարեալ գրամագրուի 250,000	Վճարեալ գրամագրուի 250,000	Վճարեալ գրամագրուի 100,000	Վճարեալ գրամագրուի 100,000
Պահեստի գրամագրուի 100,000	Պահեստի գրամագրուի 100,000	Պահեստի գրամագրուի 100,000	Պահեստի գրամագրուի 100,000
Հի ճիւղին դրացեալ 596,000—346,000	Հի ճիւղին դրացեալ 596,000—346,000	Հի ճիւղին դրացեալ 250,000—350,000	Հի ճիւղին դրացեալ 250,000—350,000
1872ին հրդեհի գուտ հատոյթը 794,000	1872ին հրդեհի գուտ հատոյթը 794,000	1872ին հրդեհի գուտ հատոյթը 1872ին	1872ին հրդեհի գուտ հատոյթը 1872ին

Ստորագրողը իրենց բաղանիւ յաճախորդաց և այս քաղաքի ընդհանուր
հասարակութեան կը ծանուցանեն որ իրենք վերալիւս երկու ընկերութեանց մի-
տեղա գործակալաւոր ընտրուած ըլլալով, այնպիսի գրութեան մը մէջ կը գտնուին,
որով հըզեհի դէմ ապահովութեան մեծ գիւրութիւններ կը մատուցանեն ։
Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց
մէջ համամատակամ բաժանում մը, և այսպէս ապահովութեան և գիւրութեան
աւելանալով ընկերութիւնն ալ կրնայ աւելի մեծագուտաւ ապահովութիւն բռնող-
ներու ինքզինքն ինքնապաշտեն ։
Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութիւնը կրնան ընդունուիլ ինչպէս
Բերայի Ղալաթիոյ և Պօլսի մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները գիւղերը և գա-
ւառները ։
Գրեթէ ամեն և աւելի մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել Մի-
տեղալ ընկերութեանց գրասենեակը Ղալաթիոյ Բէրլէմի քաղաքի մօտ Կալաթի
խան թիւ 5 ։
Լիւսիոյ գործակալաւոր
Վ. Ռ. ՍՈՒՄԱՆ